ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ Կորյուն Սամսոնյանի կողմից 2022 թվականի փետրվարից 2022 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հանդիսանալով ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- նախապատրաստել եմ Տեսչական մարմնի ղեկավարի արտասահմանյան այցերի, օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների, տեսակոնֆերանսների, քննարկումների բովանդակային մասը, կատարել արդյունքների վերլուծություն,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի ղեկավարի ելույթի խոսքի, զեկույցների, ուղերձների մշակման և քննարկվող նյութերի նախապատրաստման աշխատանքներ (և՛ հայերեն, և՛ օտար լեզուներով), մասնավորապես՝
    - փետրվարի 9-ին Տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանի և ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի թիմի ղեկավար Պասխալիս Բոկկերսի հանդիպման ընթացքում քննարկվող նյութերի նախապատրաստումը, ինչի արդյունքում փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Ավստրիական զարգացման գործակալության միջև,

- ապրիլի 21-ին Մոսկվայում տեղի ունեցած Ռոսսելխոզնադզորի ղեկավար Սերգեյ Դանկվերտի և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանի հանդիպման ընթացքում քննարկվող նյութերի նախապատրաստումը, որտեղ կողմերը գոհունակություն են հայտնել Ռուսաստանի և Հայաստանի միջև գործարար և առևտրային հարաբերությունների բարձր մակարդակի համար և հաստատել իրենց մտադրությունը՝ զարգացնելու համագործակցությունը հեռահար եղանակով,
- ապրիլի 22-ին Ռուսաստանի մայրաքաղաքում կայացած «Նոր օրենսդրությունն ու նորմատիվ փոփոխությունները Ռուսաստանյան գինեգործության ոլորտում. Ազգային կոնյակի կոդ ծրագիրը գինեգործական արտադրանքի որակի և հետագծելիության միասնական մոնիտորինգային համակարգում» միջազգային կոնֆերանսին Տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանի ելույթի խոսքը, որով նա ներկայացրել է խաղողագործության և գինեգործության արդի վիճակը երկրում, արտադրության ծավալները, արտահանման ու դրա նկատմամբ վերահսկողության մեխանիզմները՝ ներառյալ որակի և անվտանգության պահպանման ուղղությամբ ներդրված մեթոդները,
- մայիսի 24-ին մեկնարկած Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (ԿԱՀԿ) 89-րդ ամենամյա գլխավոր նստաշրջանի ընթացքում քննարկվող նյութերի պատրաստում, որն այս տարի անցկացվում էր հիբրիդային՝ առկա և առցանց, տարբերակով, և որին մասնակցում էր նաև Տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանը՝ որպես հայաստանյան պատվիրակ,
- հուլիսի 25-29-ը Վրաստանի Հանրապետությունում Տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանը հանդիպել է Վրաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պաշտպանության և գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գեորգի Խանիշվիլիի հետ: Երկու երկրների անասնաբուժական ծառայությունների գործունեությանը, ոլորտի հիմնախնդիրներին նվիրված սեմինարին

Տեսչական մարմնի ղեկավարի՝ «Անասնաբուժական ծառայությունը Հայաստանում, պարտավորությունները և հիերարխիկ կառուցվածքը, ենթակայության շղթան» թեմայով զեկույցի խոսքի պատրաստում և այլն:

- կազմել եմ Տեսչական մարմնի ղեկավարի արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվություններ,
- իրականացրել եմ Սպառողների միջազգային օրվան (մարտի 15) և Անասնաբույժի միջազգային օրվան (ապրիլի 29) նվիրված միջոցառումների տեխնիկական և կազմակերպչական աշխատանքներ, մասնավորապես՝ հյուրերի ցանկի կազմում, հրավերների պատրաստում և ուղարկում, արտասահմանյան գործընկերներից ստացված ողջույնի և շնորհավորական ուղերձների թարգմանության ապահովում և այլն,
- «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով և աշխատանքային էլեկտրոնային փոստով բաժնի պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ (արտաքին և ներքին շրջանառության),
- ապահովել եմ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի հոդվածների թարգմանությունը հայերենից ռուսերեն և անգլերեն լեզուներ,
- ուսումնասիրել եմ այլ երկրներում սպանդանոցների կառուցվածքն ու փորձը, հավաքագրել տեղեկատվություն և տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը,
- բաժնի պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ Կորյուն Սամսոնյան

02 օգոստոսի 2022թ.